ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«08» 02 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 08

Ձեռնարկողը՝ ***<<Բիթեր Ռիվեր>> ՍՊԸ***
Ք. Երևան, Արամի 72/37

Գործունեությունը՝ ***Արզնի համայնքի Երևան-Սևան մայրուղի 10/5 հասցեում նախատեսվող գարեջրի գործարանի և ռեստորանի նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ՀՀ Կոտայքի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 3 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 08

«08» 02 2018թ.

«Բիթեր Ռիվեր» ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի Երևան-Սևան մայրուղի 10/5 հասցեում նախատեսվող գարեջրի գործարանի և ռեստորանի աշխատանքային նախագծի նախնական գնահատման հայտ

Պատվիրատու՝	<<Բիթեր Ռիվեր>> ՍՊԸ
Նախագծողներ՝	<<Կետ Արքիթեքթ>> ՓԲԸ
Ներկայացված նյութեր՝	Աշխատանքային նախագիծ, Նախնական գնահատման հայտ;
Տեղադրման վայրը՝	Արզնի համայնքի Երևան-Սևան մայրուղի 10/5
Գործունեության կատեգորիան	/Գ/ կատեգորիա

Համաձայն ներկայացված աշխատանքային նախագծի <<Բիթեր Ռիվեր>> ՍՊ ընկերությունը նախատեսում է ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի Երևան-Սևան մայրուղի 10/5 հասցեում կառուցել գարեջրի գործարան և ռեստորան:

Համալիրը բաղկացած է՝

- 83,5 x 21,0 մ առանցքային չափսերով և 9,3 մ առավելագույն բարձրությամբ գարեջրի գործարանից,
- 35,5 x 1,70 մ առանցքային չափսերով և 9,3 մ առավելագույն բարձրությամբ ռեստորանից,
- 40,0 x 17,0 մ առանցքային չափսերով և 6,3 մ առավելագույն բարձրությամբ սրճարանից:

Գործարանի 4-9 առանցքների և ռեստորանի D1-C1, 1-5 և C1-A1, 4-5 առանցքներով սահմանափակված տեղամասերում նախատեսվում է երկրորդ հարկ:

Բոլոր օբյեկտների կրող կմախքը կազմված է պողպատե թեթև կառուցվածքներից, որոնք միացվում են միմյանց հեղյուսներով: Սյուները միացվում են երկաթբետոնե կետային հիմքերին խարսխային հեղյուսների միջոցով:

Նախատեսված է՝

- կատարել տարածքի ուղղաձիգ համահարթում,
- կառուցել համալիրի 3 հիմնական օբյեկտները,
- տեղադրել անհրաժեշտ սարքավորումները,
- կառուցել 2 բաց ավտոկայանատեղի,

- իրականացնել ինժեներական կոմունիկացիաները:

Նախատեսվող գարեջրի գործարանի արտադրողականությունը կազմելու է 50000 դալ/տարի:

Ստորև ներկայացված է գարեջրի պատրաստման տեխնոլոգիական պրոցեսը՝

- Աձիկի աղում
- Շաղախում՝ աձիկը համապատասխան բաղադրատոմսի խառնել ջրի հետ 1.5- 2 ժամ
- Ֆիլտրացիա՝ ստացված շաղախի ֆիլտրում, 1.5 - 3 ժամ,
- Եփում՝ ֆիլտրացված քաշցուի եռացում, 1 - 1.5 ժամ,
- Եփած քաշցուն սառեցնելով ուղարկվում է տարողության մեջ, 1 ժամ,
- Խմորում տանկում՝ 10 - 15 օր
- Լազերիզացիա՝ 3 - 4 շաբաթ
- Կեգալացում՝ 1.5 ժամ:

Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցությունների բացառման, նվազեցման նպատակով նախատեսված են մի շարք միջոցառումներ:

Օդային ավազանի վրա ազդեցությունը կապված է հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի աշխատանքի ընացքում առաջացող արտանետումներով:

Օդային ավազանի աղտոտումը նվազեցնելու նպատակով նախատեսված են հետևյալ միջոցառումները.

-շինարարական հրապարակները ցանկապատել համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,

-շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,

-պարտադիր կարգով շինանյութերը, ավելցուկ գրունտը և շինարարական աղբը տեղափոխել անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով,

-շինհրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել,

-սորուն նյութերը (ավազ, ցեմենտ) պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,

-շինարարական տեխնիկայի տեղաշարժը և աշխատանքը իրականացվելու է միայն գոյություն ունեցող ճանապարհներով, բացառելով կանաչ գոտիների վնասումը, նոր տարածքների խախտումը և աղտոտումը:

-բացառվելու է շինարարական աղբի և հողերի կուտակումները բուսածածկ տարածքներում:

-պարբերաբար իրականացվելու է տեխնիկայի շարժիչների կարգաբերում,

-չոր եղանակների ժամանակ իրականացվելու է խճի, պահեստավորված և տեղափոխվող հողային զանգվածների խոնավացում:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ աշխատանքները իրականացվելու են ջրային ռեսուրսներից բավականին հեռավորության վրա, կարելի է եզրակացնել, որ թե շինարարության, և թե շահագործմանը ընթացքում որևէ ազդեցություն ջրային ռեսուրսների վրա չի լինի:

Հողածածկին պատճառված վնասները նվազագույնին հասցնելու նպատակով նախատեսված է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- շինարարության ընթացքում տարածքի բուսահողը հանվելու և կույտավորվելու է պաշտպանված վայրերում, հետագայում այն օգտագործվելու է տեղանքի բարեկարգման համար,
- ապահովելու են անհրաժեշտ պայմաններ, որպեսզի հանված բուսահողը չխառնվի գրունտի հետ և չաղտոտվի ,

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

- բուսահողի պահեստավորման համար ընտրվելու է շինարարական հրապարակից դուրս տեղակայված վայր:

- շինարարության ավարտից հետո հանված բուսահողը օգտագործվելու է տարածքի կանաչապատման նպատակով:

- կառուցապատումից ազատ տարածքում նախատեսվում է իրականացնել բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

Ընկերության ջրամատակարարումը իրականացվելու է <<Վեոլիա Ջուր>> ՓԲ ընկերության կողմից, համաձայն տրամադրված տեխնիկական պայմանի:

Արտադրության և կենցաղ-կոմունալ հոսքաջրերը հավաքվում են տարածքում առկա 50 մ3 ծավալով անջրթափանց սեպտիկ հորում և ժամանակ առ ժամանակ, ըստ անհրաժեշտության հեռացվում են մասնագիտացված կազմակերպության կողմից կենցաղային կոյուղու ցանց:

Շինարարության և շահագործման ողջ ընթացքում ընկերության կողմից իրականացվելու են մշտադիտարկումներ՝ հայտում ներառված բոլոր միջոցառումների ժամանակին և ճշգրիտ իրականացման, շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված:

<u>Եզրահանգում</u> Նախատեսվող գործունեության հիմնական ազդեցությունը պայմանավորված է շինարարության փուլով, ինչը չունի զգալի ազդեցություն և կրում է ժամանակավոր բնույթ: 2017թ դեկտեմբերի 12-ին և հունվարի 29-ին նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի վերաբերյալ կազմակերպվել են հասարակական լսումներ, որոնց արդյունքում կազմված արձանագրություններով մասնակիցները և ազդակիր համայնքը նախատեսվող գործունեության իրականացմանը տվել են իրենց հավանությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Բիթեր Ռիվեր>> ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի Երևան-Սևան մայրուղի 10/5 հասցեում նախատեսվող գարեջրի գործարանի և ռեստորանի աշխատանքային նախագծի նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Մասնագետ Ա. Մինասյան